

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՍԱԻ-ԳՀԾՁԲ-18/2» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստ

ք. Երևան
Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)
Գնահատող անդամներ (ԳԱ)
Բացող անդամներ (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝

24 օգոստոսի 2018թ. ժամը 11:00

Գ. Նազարյան
Գ. Մաթոսյան, Հ. Պողոսյան
Ա. Չուխաջյան, Ա. Ստեփանյան
Հ. Ղազարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
 2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
 3. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:
 4. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
 5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
 6. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
 7. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:
- Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:**

2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

2.1. Սահմանված ժամկետում գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Էլ. փոստի հասցե
1	«Լաճ Գրուպ» ՍՊԸ	lachgroup.procurment@gmail.com
2	ՖԱ Լարիսա Բաղդասարյան	larabaghdasar@gmail.com
3	«Աութսորս» ՍՊԸ	outsourcellc@yandex.ru

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

3. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

3.1 «Լաճ Գրուպ» ՍՊԸ, ՖԱ Լարիսա Բաղդասարյան և «Աութսորս» ՍՊԸ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում (որոնք Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր) առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

4.1 «Լաճ Գրուպ» ՍՊԸ, ՖԱ Լարիսա Բաղդասարյան և «Աութսորս» ՍՊԸ մասնակիցները կազմել և ներկայացրել են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

5.1 Ընդունել ի գիտություն, որ

Գնման առարկա է հանդիսանում «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կարիքների համար Գնումների համակարգողի ծառայության ձեռքբերումը, որը խմբավորված է 1 չափաբաժնում:

Պայմանագիրը կատարելու համար հրավերով սահմանված պահանջներին համապատասխան գնահատված մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չ/Հ	Գնման առարկայի անվանում Մասնակցի անվանում	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ			
		Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր	Նախահաշվային գին
1	Գնումների համակարգողի ծառայություն				
1.	«Լաճ Գրուպ» ՍՊԸ	272 000	0	272 000	320 000
2.	«Աուրսորս» ՍՊԸ	276 000	0	276 000	
3.	ՖԱ Լարիսա Բաղդասարյան	288 000	0	288 000	

Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված գնային առաջարկներում չկան քվեերով և տառերով արտահայտված տվյալների միջև անհամապատասխանություններ:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

6. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:

6.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Լաճ Գրուպ» ՍՊԸ մասնակցին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով:

6.2 Երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Աուրսորս» ՍՊԸ մասնակցին:

6.3 Էլեկտրոնային եղանակով ՀՀ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

6.4 Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի և գնման ընթացակարգի հրավերի տեքստով ներկայացված պահանջը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ մասնակցին գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկել ծանուցել, որպեսզի վերջինս ներկայացնի հավաստում, որ իր աշխատակիցը ընդգրկված է լիազորված մարմնի կողմից հրապարակվող գնումների որակավորված համակարգողների ցուցակում:


Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

7.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերի և ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրվող Տեղեկատվության ստացման հաջորդող աշխատանքային օրը:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝



Գ. Նազարյան

Գնահատող անդամներ (ԳԱ)՝




Գ. Մաթոսյան


Բացող անդամներ (ԲԱ)՝



Հ. Պողոսյան



Ա. Չուխաջյան



Ա. Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար՝



Հ. Ղազարյան